որ ի վերոյ յիշեցաք և պատկ փշոցն Յովսէփ Արեմաթացուն որ Քրիստոս ի խաչէն իջոյց սուրբ Աստուածն ասելով և պատանեաց և եդ ի նորափոր վիմին և զայն աստուածաշնչաւոր աջն. և սուրբ շիշ իւղոյն ազնուականին որ ի քիշ մնացեր էր և Աստուածամօր պատկերն սուրբ առաքեալն Թադէոս տարեալ ի Հայս։

Այս է նշան սուրբ գեղարդեանն և այսու օրինակաւ ճանաչէք, զի մի խաբեսցին զձեզ նենգաժոտ ազգն Յունաց, որ թագաւոր սուրբք և աստուածասէրք բերեալ զերկնային պատկն սուրբ հաւատացելոցն Քրիստոսի և յամենայն սուրբ յեկեղեցիս հռչակայ պարծանք։

Եւ արդ սուրբ գեղարդն Քրիստոսի՝ յերկնային զանձն լուս կայ ի խաւարի ծածկեալ աշխարհին Հայոց և որք տեսանեն զնա մի տեսցեն զմահ յաւիտենից. և ոչ իշխեսցէ նեռն սահմանս և որ թագաւորութեան, որ կայ մնանել ի յիմացեալ և պատչեալ թագաւորութիւն այնմ աշխարհին, սակաւ նուազի ժամանակս։ Եւ նմանութիւն սուրբ աստուածագիր գեղարթին այսպէս է։

Դրմբէթաց և ի վեր քարշեալ զլուխ նորա որպէս նիզակի սուր առ հաւասար և յերկնային և հրեշտակաց ձեւեալ նման խաչի փորեալ, և զփորեալ հարուածն յանդրէն Բ կողմանէ յերեսաց սուրբ խաչին բեւեռեալ և բեւեռմամբ Դ որպէս Ցէրն ի խաչին և ինծոր ամՃռա խաչին աղիւսայ նման և ԲԺ-ան կողմն յօրինակ առաքելոցն. և վայր կողմն փոր նիզակին Դ մատին չափով. բայց ոչ այլ ինչ քանդակեալ այլ ամենեին անարատ և հաւասար. այս է նշան գեղարդեանն։

Ցիրամօր պատկերն ի Հոգոց վանքն է, ի Թողկաց գաւառին։

Եւ շիշ իւղոյն յերկիրն Ցարաւնոյ ի վանքն Եղեգնի։ Ի ճանաչել Արեմաթացոյն աջն ի Առբերան գաւառին՝ ի գիւղն որ առաքելոյն Թադէոսի անուամբն է. և պատկ փշոցն իւր վանքն կայ ուր նահատակեցաւ առաքեալն սուրբ ի Զարեւանդ գաւառի։ Եւ այսպէս աւրինակեցաւ անօրինակ սրբութիւն ի հռոմ դրէ ի հայ թարգմանեցաւ և բերաւ ի Հայս։ յորում էր Թիւս ՃՀԶ Քրիստոսի փառք յաւիտեանս։

Ձեռագրիս տարեթիւը յայտնի չէ, ինչպէս նաև գրչի անունը. ԺԷ-րդ դարը կարող է նրա գրութեան սահման ընդունուիլ։ Իսկ թէ յիշատակարանը ինքը երբ է ծագել և թէ արդեօք հայերէն է եղել բուն բնագիրը, թէ օտար լեզուից է թարգմանուած, այդ մասին առայժմ կարող կլինէինք միայն ենթադրութիւններ անել։

Մեսրոպ վարդապետ.

1898 թ. 10 մարտի։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

Ուսուցումն քրիստոնէական կրօնի.—Դասախօսութիւն Սահակ քահանայի Սահակեանց. Տրփխիս, 1898. գինը 1 ռ, 50 կ.

— Սանթօ (վէպիկ հայ բօշաների կեանքից).—Թիֆլիս, 1898. գինը՝ 30 կ.

— Ամուրին (պատկեր).—Ցարութիւն Թումանեանց. Թիֆլիս, 1898. գինը՝ 20 կ.

— Շէքլուի սպանութիւնները (Ց. Խուբլարեանի և միւսների գործը). Զինուորական դատարանի քննութիւնը Շուշում.—«Նովոյէ Օբոզր.» լրագրից թարգմ. Ս. Հ.,—Թիֆլիս. 1898.

— Վրացի Պոէտ Ակակին Հայերի մասին. — «Նովոյէ Օբոզր.» լրագրից թարգմ. Ս. Հ.; Թիֆլիս. 1898.

—ՏԱՐԵՐՔ ԲՆԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ.

ա. Նոր Կենդանաբանութիւն և Մարդաբանութիւն.—Հ. Սիմէոն Երեմեան, ի Մխիթարեան ուխտէն. (զարդարեալ 450 պատկերօք), Վենետիկ.—Ս. Ղազար. 1896։

բ. Հանքաբանութիւն.—Հ. Ս. Երեմեան. — Վենետիկ. 1898.

— Նկարներ (ծաղկաքաղ իմ նամակներից).—Ն. Ցարոյ.—Թիֆլիս. 1898.